

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԶՏՐՎԵՆՔ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԻ, ԶԵՆԹԱՐԿՎԵՆՔ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻ, ՊԱՀՊԱՆԵՆՔ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅՆ ՄԵՐ ԱՌԱՋՆԹԱՅԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է»

Անցնող շաբաթ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը: Նիստի մեկնարկին վարչապետը մանրամասն խոսեց տարածաշրջանային մարտահրավերների, աշխարհաքաղաքական և գլոբալ տնտեսական փոփոխվող իրադարձությունների պայմաններում, երկրի առաջընթացի ապահովման միջոցառումների մասին: Նա քաղաքացիների կոչ արեց՝ չենթարկվել սադրանքների, պահպանել հանգստություն:

- Ցանկանում եմ՝ ես մեկ անգամ քաղաքացիներին հանդարտության կոչել: Առկա մարտահրավերների ֆոնին երկիրը պահպանում է իր խաղաղությունը ու կայունը-



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՆՅՔՈՒՄ «ԽՏՂԱԴ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆ» ԷՐ

Մարտի 29-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ընդունեց եւ գրույց ունեցավ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ:



Վրաստանի վարչապետի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարի հանդիպմանը գրուցակիցները գոհունակություն հայտնեցին վրաց-հայկական արդյունավետ համագործակցության կապակցությամբ, ընդգծելով, որ, բարձր մակարդակի հանդիպումների պարբերական անցկացումը, դրական դինամիկա է հաղորդում երկու երկրների միջև փոխգործակցության հետագա խորացմանը:

Արարատ Միրզոյանը համոզմունք հայտնեց, որ երկու երկրների միջև փոխվստահության ու շարունակական երկխոսության ամրապնդումը կնպաստի տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը: Նա նշեց նաև, որ, Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացումը, Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունի, որն արտահայտված է նաև Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագրում:

Հանդիպմանը կարելի էր ցուցաբերել տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների շարունակականությունը:

Կողմերը քննարկեցին տարածաշրջանում ստեղծված իրավիճակի հարցերը, ուշադրություն բեւեռեցին Վրաստանի վարչապետի «Խաղաղ հարեւանության նախաձեռնությանը», որի նպատակը երկխոսության ձեւաչափի հաստատումն է: Ընդգծվեց, որ Վրաստանը մշտապես աջակցում է խաղաղ համագործակցությանը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄ

ՀԻՆԳ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆ ԱՅՑ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ՀԻՆԳ ՏԱՐԻ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ

Մարտի 28-ին լրացավ Եվրամիության հետ Վրաստանի անաչցեգրային պայմանագրի գործարկման 5-րդ տարին:

Տարեդարձի առիթով Վրաստանի կառավարության հերթական նիստին՝ վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին երկրի բնակիչներին շնորհավորեց անաչցեգրային պայմանագրի կիրարկման հորելյանի առթիվ եւ նշեց, որ, անցած ժամանակահատվածում, Վրաստանի ավելի քան 500 հազար քաղաքացիներ 1,5 միլիոնից ավելի ու-

ղեղություններ են կատարել Եվրամիության երկրներ:

- Ես ցանկանում եմ բնակչությանը հիշեցնել, որ Վրաստանի ավելի քան կես միլիոն բնակիչներ 1,5 միլիոնից ավելի այցեր են կատարել Եվրամիության երկրներ, ինչը այն կոնկրետ արդյունքն է, որին մենք հասել ենք ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի ձեւակերպումից հետո,- հայտա-



րարեց Իրակլի Դարիբաշվիլին՝ հավելելով, որ Վրաստանը ԵՄ-ի հետ անաչցեգրի պայմանագրի վրա սկսել է աշխատել 2013 թվականից: 2015 թվականի դեկտեմբերին (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 30-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գործող նախագահ, Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ջրիգանե Ռաուի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին, Ուկրաինայում շարունակվող ռազմական գործողությունների արդյունքում, տարածաշրջանում ստեղծված անվտանգության մարտահրավերները:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Լեհաստանի՝ ԵԱՀԿ-ի նախագահության ընթացքում ապագա համագործակցությանը եւ այս համատեքստում տարածաշրջանային անվտանգության

խնդիրներին: Լեհ դիվանագետը վերահաստատել է իր ամուր աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը, ինչպես նաև երկրի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրմանը: Հանդիպման ընթացքում վարչապետը ողջունել է ԵԱՀԿ-ում նախագահության ընթացքում Լեհաստանի հայտարարած կարեւորագույն առաջնահերթությունները:

ՏԱՐԵԼԻՑ

ՄԱՐՏԻ 31-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ՕՐՆ Է ԱՅՉ ՕՐԸ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԶԿԻՍԴ ՎԱՄՍԱԽՈՒՐԴԱՅԻ ՄՆԵՂՅԱՆ 83-ԱՄՅԱԿ ԷՐ

Մարտի 31-ին լրացավ Վրաստանի անկախության վերականգնման հանրաքվեի անցկացման 31-րդ տարելիցը: 1991 թվականի այդ օրը, ողջ Վրաստանը, ներառյալ Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածքի ժողովուրդը, բարձրաձայն եւ հստակ հայտարարել էր պետականությունը վերականգնելու որոշման մասին:

Տարեկիցի կապակցությամբ իր շնորհավորական ուղերձում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին առանձնակի նշեց պետական անկախության վերականգնման գործում Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի ավանդը:

- Ժողովրդի միահամուռ կամքը

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)



ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԸՆԴՊԾՎԵՅ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՎՏԻՎԱՅՄԱՆ ԱՆՀՐԱԾԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Միրչա Ջոաննայի հետ՝ քննարկելով Ուկրաինայում ռուսական ռազմական ագրեսիան եւ ՆԱՏՕ-Վրաստանի միջև երկարաժամկետ սերտ համագործակցությունը:

Ջրույցին անդրադարձան նաև տարածաշրջանում խաղաղության եւ կայունության

կարելիությունները եւ այս ուղղությամբ ձեռնարկվելիք կոնկրետ քայլերին:

Նշվեց, որ Վրաստանը եղել է մնում է ՆԱՏՕ-ի հավատարիմ գործընկերը եւ այլանսի հետ համագործակցելու երկար տարիների փորձ ունի: Հանդիպման ընդգծվեց տվյալ գործընկերության ակտիվ շարունակումն այս ճգնաժամային ժամանակաշրջանում՝ թե՛ հաղորդակցության, թե՛ հանդիպումների առումով:



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ՀԻՆԳ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆ ԱՅՑ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տեմբերին Եվրամիությունը բավարար է համարել կատարված աշխատանքը եւ 2017 թվականի մարտի 28-ին Վրաստանի քաղաքացիներին տրամադրել է առանց այցեգրերի Շենգենյան գոտու երկրներ այցելելու իրավունք՝ 90 օր ժամկետով, 180 օրվա ընթացքում:

Անայցեգրային պայմանակարգի կիրարկման 5-րդ տարեդարձի առիթով Վրաստանի արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ այն ողջ երկրի ընդհանուր ձեռքբերումն է: Վերացնելով վիզային արգելքները՝ Վրաստանի քաղաքացիները կարողացել են

հեշտությամբ, ազատ ճամփորդել ԵՄ եւ Շենգենյան երկրներ: Վրաստանն ամրապնդել է ԵՄ-ի վստահելի եւ արժանի գործընկերոջ կարգավիճակը եւ կարողացել է ստանալ ԵՄ ուժեղ աջակցությունն իր եվրոպական ինտեգրման գործընթացում:

Անայցեգրային պայմանակարգի հոբելյանին արձագանքել է նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին: Նա իր թվիթերյան էջում գրառում է կատարել՝ ԵՄ եւ Շենգենյան գոտու երկրների հետ առանց վիզային ռեժիմի հինգերորդ տարեդարձի առիթով: Նրա խոսքով՝ Եվրամիության հետ վիզային ազատականացումը կենսական նշանակություն ունի Վրաս-

տանի քաղաքացիների համար:

«Այսօր մենք նշում ենք ԵՄ/Շենգեն գոտու հետ անայցեգրային ռեժիմի հինգերորդ տարեդարձը: Կենսական, շոշափելի օգուտները Վրաստանի քաղաքացիների համար՝ ԵՄ-Վրաստան առող գործընկերության արդյունքում»,- գրել է Շավա Պապուաշվիլին: Նրա հաղորդմամբ՝ վրացական անձնագիրը մեծ արժեք ունի, անձնագրերի համաշխարհային վարկանիշում՝ 119 երկրների թվում այն 30-րդ տեղում է:

Հիշեցնենք, որ 2017 թվականի մարտի 28-ից Վրաստանի քաղաքացիները, ովքեր ունեն կենսաչափական անձնագիր, կարող են առանց վիզայի մեկնել ԵՄ/Շենգենի անդամ երկրներ:



ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԱՆՆ ԱՆՆԱԳԱՐԻՆ ՀՐԱՎԻՐԵՑ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված միջոցառմանը՝ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, իր երախտագիտությունը հայտնելով ԱՄՆ-ի կառավարությանը՝ Վրաստանին ցուցաբերած աջակցության համար, ԱՄՆ նախագահին հրավիրեց Վրաստան:

- Վրաստանի խնդրանքն է, որպեսզի իրականացվեն բարձր մակարդակի այցեր: Վրաց ժողովուրդը սպասում է, որ Ռուբ կայցելեք Վրաստան: Մենք Ձեզ սպասում ենք: Ամերիկայի նախագահն արդեն եղել է Վրաստանում, եւ այս անգամ նույնպես նրան կընդունենք հավիտյա պատշաճի: Կարծում են, ժամանակն է, որ բարձր մակարդակի այցն իրականացվի,- հայտարարեց Սալոմե Ջուրաբիշվիլին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՐ ԿԱԶՄԵԼ Է 14,6 ՏՈՒՆՈՍ

Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2022 թվականի փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տնտեսությունն աճել է 14,6 տոկոսով, հունվար-փետրվարին միջին աճի տեմպը կազմում է 16,3 տոկոս:

Միաժամանակ, 2022 թվականի փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճ է նկատվել հետեւյալ ոլորտներում՝ արդյունաբերություն, տրանսպորտ եւ պահեստավորում, էլեկտրաէներգիա, գազ, գոլորշու փոխանցում, հյուրանոցներ եւ ռեստորաններ, անշարժ գույք, արվեստ, ժամանց եւ հանքարդյունաբերություն:

ԼԱՐԻ ԿՈՒՐՍԸ ԿԱՅՈՒՆԱՆՈՒՄ Է

Վրաստանի ազգային արժույթը դուրսի նկատմամբ կայունացել է:

Պաշտոնական տվյալներով՝ մեկ դուլարը կարելի է գնել 3,11 լարիով: Վաճառքի դեպքում մեկ դուլարի արժեքը կազմում է 3,09 լարի:

Ինչ վերաբերում է եվրոյին, ապա դրա փոխարժեքը կազմում է 3,4496 լարի:

ՄԻՋԳԵՐԱՏԵՍԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽԱԴԱՐՁ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին հայտարարեց, որ, 2021 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2022 թվականի մարտի 21-ը, հաստատվել են կառավարության կողմից դեսպանի եւ դիվանագիտական առաքելության ղեկավարի պաշտոնում առաջադրված բոլոր 12 թեկնածուները, սակայն կառավարությունը դա հերքում է:

Վրաստանի կառավարության հաղորդագրության համաձայն գործադիր կողմից առաջադրված դեսպանների, դիվանագիտական առաքելության ղեկավարների թեկնածուների հարցը նախագահի կողմից բազմիցս մերժվել կամ անպատասխան է մնացել: Կառավարության հայտարարությանն ի պատասխան Սալոմե Ջուրաբիշվիլու աշխատակազմից նշել են, որ նախագահի կամ նրա վարչակազմի հասցեին անհիմն մեղադրանքներն անցանկալի լարվածություն են առաջացնում հասարակության մեջ: Նշենք, որ Վրաստանի Սահմանադրությունը կառավարու-

թյանը տալիս է արտաքին քաղաքականություն վարելու բացառիկ իրավունք, որը ներառում է նաեւ դեսպանների եւ մշտական ներկայացուցիչների նշանակումը առաքելություններում: Ըստ երեւույթին, Վրաստանի խորհրդարանը պետք է քննարկի օրինագիծ, ըստ որի՝ պետական մարմինը իրավասություն վերաբերյալ վեճ կարող է հարուցել ոչ միայն այլ մարմնի կողմից ընդունված նորմատիվ ակտի, այլեւ գործողության/անգործության հիման վրա, եթե գտնում է, որ մյուս մարմինը խախտել է իր սահմանադրական լիազորությունները:

ՏԱՐԵԼԻՑ

ՄԱՐՏԻ 31-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ՕՐՆ Է

ԱՅՅՈՐ ՕՐԸ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՆ ԶՎԻՍԴ ԳԱՄԱՆՈՒՐԴԻԱՅԻ ՇՆԵԴՅԱՆ 83-ԱՄՅԱԿՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եր, որն առաջնորդեց Գերագույն խորհուրդը՝ նույն թվականի ապրիլի 9-ին Պետական անկախության վերականգնման ակտի ընդունման հարցում:

Շատերը պայքարեցին այս հաղթանակի համար, սակայն կասկած չկա, որ դա, առաջին հերթին, Վրաստանի առաջին նախագահ, ճշմարիտ ժողովրդական առաջնորդ Ջվիադ Գամսա-

խուրդիայի վաստակն է,- հայտարարեց վարչապետը:

Մարտի 31-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հարգանքի տուրք մատուցեց Վրաստանի առաջին նախագահ Ջվիադ Գամսախուրդիայի հիշատակին: Վարչապետն այցելեց Մթածմինդայի գրողների եւ հասարակական գործիչների պանթեոն, որտեղ ծաղիկներ խոնարհեց Ջվիադ Գամսախուրդիայի շիրմին:



ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆ ՎՆԱՍԵՑ ԱՆՍԱԼՔԱՆԱՔԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի քանի ժամ մոլեգնող ուժգին քամին լուրջ վնասներ է հասցրել Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների բնակավայրերին:

Մասնավորապես, վնասվել են Ախալքալաքի Քոչիա գյուղի դպրոցի տանիքը, Ագանայի գյուղատնտեսական շինությունները, Ալաթուման, Կոճիո, Կոթելիա, Արագվա եւ Օրջա գյուղերի բնակելի տներ: Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ներկայացուցիչները եւ հատուկ հանձնաժողովը, փոխքաղաքապետ եւ հանձնաժողովի նախագահ Թեյմուրազ Մճեղիժեի գլխավորությամբ, տեղերում ուսումնասիրել են վնասի չափը:

Ուժեղ քամին վնասներ է հասցնել Նինոծմինդայի մունիցիպալիտետին: Ինչպես տեղեկացրին Նինոծմինդայի մունիցիպալիտետի ենթակառուցվածքների ծառայությունից, ներկա դրությամբ, վնասի փոխհատուցման 18 դիմում է ներկայացվել: Այդ դիմումներից միայն երեքում է նշվել, որ վնասված է բնակելի շենքերի տանիքները, իսկ մնացած դիմումներում նշվում է, որ քամիով են կոմունալ սենյակների ու զոմերի տանիքները:

Նշենք նաեւ, որ մունիցիպալիտետում լրացուցիչ բարդություններ առաջացրեց նաեւ ձնաբուրքը, որի պատճառով առանձին բնակավայրերում ճանապարհների դժվարանցանելիություն գրանցվեց: Ինչպես նշեց Նինոծմինդայի փոխքաղաքապետ Արմեն Բոլոյանը՝ աշխատանքներ տարվեցին Նինոծմինդա-Փոքր Խանջալի, Սամբա

եւ Տամբովկա գյուղեր տանող ճանապարհների մաքրման ուղղությամբ:

ՎԵՐՍԿԱՎԵՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՍԱԺԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

«1+4» ծրագրի շրջանակներում՝ վրացական բուհերում սովորող ազգային փոքրամասնության ներկայացուցիչ-ուսանողներից երկուսը ստաժավորում են անցնում Նինոծմինդայի քաղաքապետարանում, մասնավորապես՝ կադրերի կառավարման եւ ֆինանսական ծառայություններում: Քանի որ, ներկա դրությամբ, համալսարանում ուսուցումը հեռավար է, ուսանողները ստաժավորման համար կենսական կարևոր ենթակառուցվածքների կարգավորումն է:

ԱՎԱՐՏԿԵՑԻՆ «ԳՅՈՒՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ» ՆԱԽԱՏԵՍԱԿԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Ախալցխի մունիցիպալիտետի գյուղերում ավարտվեցին «Գյուղի օգնության ծրագրի» շրջանակներում անցկացվող հանդիպումները, որի նպատակը պետության կողմից տրվող ֆինանսական աջակցությամբ, բնակավայրերի համար կենսական կարևոր ենթակառուցվածքների կարգավորումն է:

Նշենք, որ 2022 թվականին, վերոնշյալ ծրագրի շրջանակներում, Վրաստանի տարածաշրջաններում, ենթակառուցվածքների կարգավորման նպատակով, ծախսվելու է 612 հազար լարի:

ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՁՆԵ ՔԱՆԴԱԿՆԵՐ» ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ



Մարտի 31-ին, Նինոծմինդայի քաղաքի մշակութային կենտրոնի հարակից տարածքում, կենտրոնի նախաձեռնությամբ, անցկացվել է ավանդական «Ձնե քանդակներ» մրցույթը:

Քաղաքապետարանի կազմակերպած մրցույթին մասնակցել են Նինոծմինդայի թիվ, թիվ 1 եւ 3, Մեծ եւ Փոքր Խանջալիի եւ Գամձայի թիվ 2 հանրային դպրոցների աշակերտներն ու մանկավարժները:

Հանդիսատեսի համակրանքին է արժանացել Գամձայի թիվ 2 դպրոցի աշակերտների խաղաղություն խորհրդանշող աշխատանքը:

Մասնակից բոլոր դպրոցների թիմերը պարգևատրվել են վկայականներով եւ հուշանվերներով:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԿԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԶՏՐՎԵՆՔ ԶԳԱՅՍՈՒՆՔՆԵՐԻ, ԶԵՆԹԱՐԿՎԵՆՔ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻ, ՊԱՀՊԱՆՆԵՔ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅՆ ՄԵՐ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է»

(Սկզբը՝ 1-ին էջում)

թյունը: Պետք է զգացնումքների, սադրանքների հետեւից ընկնենք, եւ այսպէս համագիտ ու հաստատական շարունակենք զարգացնել երկիրը: Իմ հանձնարարությամբ՝ տնտեսագիտական թիմն արդեն պատրաստել է փաթեթ, որը, առաջիկա շաբաթվա ընթացքում, կներկայացվի շինարարական կազմակերպություններին: Խնդիրը վերաբերում է երկարաժամկետ մարումներով շինարարության մեկնարկին: Մենք ցանկանում ենք, որ այս մարտահրավերների, ճգնաժամի պայմաններում երկրում տնտեսական աճն է՛լ ավելի բարձր լինի: Սա ուղղակիորեն կապված է զբաղվածության ծրագրի հետ, որի վրա մենք կսկսենք ինտենսիվ աշխատել ապրիլից եւ հազարավոր աշխատատեղեր կստեղծենք երկրում.- Ընդեք Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով սննդամթերքի, վառելանյութի, առաջին սպառման ապրանքների գնաճին՝ վարչապետն ասաց, որ գնաճն առկա է ամբողջ աշխարհում, եւ, բնականաբար, Վրաստանը բացառություն չի կարող լինել:

- Մենք տեսանք, որ կազմակերպվեց որոշակի բողոքի ակցիա, որի հետեւում կանգնած էր, կուպիտ ասած, «Ազգային շարժումը»: Ես հասկանում եմ, որ մեր քաղաքացիները շատ մտահոգված են գներով: Իհարկէ, բոլորս շահագրգռված ենք, որ հնարավորինս մեղմենք իրավիճակը՝ կապված թանկացումների եւ այդ ճգնաժամից բխող ճնշումների հետ: Բայց ուզում եմ մեր քաղաքացիներին տրամադրել հետեւյալ տեղեկությունը. Ընդհանրապէս, երբ խոսում ենք գնաճի մասին, ուզում եմ հանրությանը հիշեցնել, որ, համավարակի հետեւանքով առաջացած ճգնաժամի պայմաններում, շատ երկրներում գնաճի տեմպերը ոչ միայն գերազանցել են կանխատեսումները, այլեւ հասել են ռեկորդային մակարդակի՝ վերջին տարիների եւ տասնամյակների ընթացքում: ԱՄՆ-ում, օրինակ, գրանցվել է 40 տարվա առավելագույն մակարդակ, մինչդեռ Գերմանիայում գնաճը 29 տարվա առավելագույնին է հասել: Նույնը վերաբերում է ամբողջ եվրագոտում, որտեղ արձանագրվում է գնաճի ռեկորդային ցուցանիշ: Թուրքիայում գնաճը նույնպէս բարձր է՝ վերջին 19 տարվա ընթացքում:

Մեր երկրում մարտահրավերը գնաճն է, դա շատ

հեշտ բացատրելու համար, պետք է ասել, որ մենք փոքր երկիր ենք՝ փոքր տնտեսությամբ եւ կապված ենք համաշխարհային շուկային: Այն, ինչ կատարվում է Ամերիկայում, Եվրոպայում, իհարկէ, կազդի մասն մեզ վրա: Դա մասնավարակը, գլխավոր շուռ է տվել ամբողջ աշխարհը, այժմ համավարակին ավելացել է այս ողբերգությունը՝ պատերազմը: Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր՝ Եվրոպայում այս ծավալի պատերազմ չի եղել: Սա, բնականաբար, կազդի ամեն ինչի վրա: Գների, տնտեսության, գնաճի վրա, ուստի, դա պետք է լավ հասկանալ եւ լավ բացատրել մեր քաղաքացիներին,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով կոնկրետ վառելանյութի թեմային՝ վառելաքարը նշեց, որ վառելիքի գներով Վրաստանը աշխարհում 100-րդ տեղում է եւ այն պայմաններում, երբ երկիրը ո՛չ զազ, ո՛չ էլ նավթ արդյունահանող ու արտադրող է:

- Մենք ներմուծումից կախված երկիր ենք: Եվս մեկ անգամ կոչ եմ անում մեր քաղաքացիներին՝ չտրվել այս սադրանքներից: Երեկ ուստիկանությունը պետք է արձագանքեր, իհարկէ, դա շատ ճիշտ էր, քանի որ չի կարելի, որ մարդիկ իրենց այդքան անօրեն պահեն եւ փակեն փողոցները՝ սեփական մեքենաներով: Դա անընդունելի է: Երկրում պետք է կարգուկանոն լինի, եւ բոլոր քաղաքացիները պետք է ենթարկվեն օրենքին.- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին, եւ՝ ի պատասխան ընդդիմախոսների, մեջբերելով «Միասնական ազգային շարժում» կուսակցության իշխանության ժամանակ գրանցված վիճակագրական տվյալները, հայտարարեց, որ, նախորդ իշխանության ժամանակ, 2011 թվականին, գնաճը կազմել է 14 տոկոս:

- Ես չեմ ուզում համեմատվել նախորդ իշխանությունների հետ, բայց քանի որ ընդդիմախոսներն այդքան անպատասխանատու հայտարարություններ են անում ու՝ փորձում մոլորության մեջ գցել քաղաքացիներին, ուզում եմ հիշեցնել, որ 2011 թվականի մայիսին երկրում գնաճը կազմել է 14,3 տոկոս, նույն տարվա մարտին՝ 13,9 տոկոս, ապրիլին՝ 13,5 տոկոս, իսկ ավելի վաղ գնաճը կազմել է 14,5 տոկոս: Նախորդ կառավարության օրոք միջին տարեկան գնաճը կազմել է 6,2 տոկոս, մինչդեռ մեր կառավարման 9 տարիների ընթացքում տարեկան գնաճը կազմել է 4,1 տոկոս,- հայտարարեց վարչապետը:

ԿՈՐԱ ԳՎԵՆԵՏԱՅԵ. «ԳՆԱՃԸ ԿՆՎԱԶԻ, ՍԱԿԱՅՆ ՈՉ ԱՅՆ ՍԱԿԱՐԴԱԿՈՎ, ԻՆՉ ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ»



Ինչպէս հայտարարեց Վրաստանի ազգային բանկի նախագահ Կորա Գվենետայեան՝ տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններն ազդում են ոչ միայն տարածաշրջանի, այլեւ՝ համաշխարհային տնտեսության վրա: Թեւեւ մշտական վերլուծությունների օգնությամբ՝ Վրաստանի ֆինանսական համակարգը կարող է լավ դիմակայել ստեղծված իրավիճակին:

հավելելով, որ վրացական ֆինանսական համակարգը համաշխարհային ֆինանսական համակարգի մի մասն է, եւ Վրաստանի բանկային համակարգը միացել է պատժամիջոցներից՝ ֆինանսական ուղղությանը:

- Ինչպէս գիտեք, մենք ունենք երկու առեւտրային բանկ, որոնք առեւտուր են անում Լոնդոնի ֆոնդային բորսայում, ինչը նշանակում է, որ մեր ֆինանսական համակարգը կայուն եւ պաշտպանված կլինի ընկերությունների հետ չարտոնված գործարքներից.- ասաց Ազգային բանկի նախագահը:

Անդրադառնալով վառելանյութի բարձրացած գներին՝ Կորա Գվենետայեան նշեց, որ նավթի գները զգալիորեն բարձրացել են, եւ հենց դա է պատճառը, որ գնաճը չի իջնի կանխատեսված մակարդակի:

- Վրաստանի ֆինանսական համակարգի կայունությունը մեր մշտական նպատակն է: Մենք հոգ ենք տանում ենք այդ մասին, եւ մշտական վերլուծությունների միջոցով, մեր ձեռնարկած միջոցառումների միջոցով ֆինանսական համակարգը կարող է լավ դիմակայել իրավիճակին: Ինչպէս գիտեք, 2020 թվականի կորոնավիրուսային համավարակն ուներ բազմաթիվ մարտահրավերներ եւ ֆինանսական համակարգում եւս, բայց բարեփոխումների շնորհիվ, որոնք իրականացվեցին, համակարգը հաղթահարեց այդ դժվար ժամանակաշրջանը,- ասաց Կորա Գվենետայեան:

ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹԱՇՎԻԼԻ. «ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԱՔՑԻԶԻ ԶԱՐԿԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԶԷ»



Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, մեկնաբանելով վառելանյութի գների կտրուկ աճը, հայտարարեց, որ վրացական շուկայում կարող է հայտնվել ավելի ցածր գներով ձեռք բերված վառելանյութ, ինչը կանրադառնա գնի վրա:

Նրա խոսքով՝ հարկերը վերացնելու խնդրանքը տեղին ու համարժեք միջոց չէ:

- Մենք վերահսկելու ենք իրավիճակը: Նման հարցերին պետք է շատ զգույշ մոտենալ, որպեսզի երկրում հաստատված հարկաբյուջետային կանոնակարգը չխախտվի, եւ այն չունենա խիստ բացասական, երկարաժամկետ ազդեցություն՝ երկրի մակրոտնտեսական կայունության վրա,- ասաց Լեւան Դավիթաշվիլին:

Փոխվարչապետի հավաստմամբ՝ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմը, ֆինանսների նախարարությունը եւ տարբեր գերատեսչություններ, անում են հնարավորը, որպեսզի Ռուսաստանում եւ Ուկրաինայում գործող միջազգային ընկերությունները Վրաստանը դիտարկեն որպես իրենց գործունեությունը ծավալելու հար:

Լեւան Դավիթաշվիլին նաեւ կտրականապէս հերքել է այն վարկածը, թե, իբր, հնարավոր է՝ Ռուսաստանից Վրաստան «սեւ փողեր» մտնեն:

- Վրաստանի ֆինանսական համակարգն այսօր գործում է միջազգային չափանիշներին համապատասխան: Այս առումով Վրաստանը միջազգային հանրության արժանի անդամ է որտեղ բացառված են նման գործարքներն ու ռիսկերը,- ընդգծեց փոխվարչապետը:

ԱՆՍ ԽՈՒՑԻՇՎԻԼԻ. «ԳՆԱՃԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՆՎԱԶԻ ԱՊՐԻԼԻՆ



Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլու հավաստմամբ՝ կառավարությունը կանխատեսել էր, որ գնաճը պետք է հասնի երեք տոկոսի սահմանագծին, սակայն դրա վրա ազդեցին Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունները: Նախարարի կանխագծմամբ՝ Վրաստանում գնաճի մակարդակը կսկսի նվազել ապրիլի ամսին, սակայն այն չի մտնենա թիրախին՝ երեք տոկոս նշագծին:

- Բնականաբար, գնաճը կնվազեցվի նախորդ ժամանակահատվածի համեմատ, որպեսզի հստակ հասկանանք, թե որքան մեծ է թանկացումը. դա որոշելու այլ մեխանիզմ չկա: Թե որքան բարձր կան ցածր է գնաճը, պետք է որոշել նախորդ ժամանակահատվածի համեմատ: Վրաստանում գնաճը նախորդ տարիներին շատ ավելի բարձր է եղել 13,7 տոկոսից, ինչպէս հրապարակվել է փետրվարին: Բնականաբար, մենք ունեինք գնաճի կանխատեսում, ունեինք հաշվարկներ, այդ թվում՝ Ազգային բանկի հետ, որ գնաճը պետք է վերադառնա երեք տոկոս թիրախին, բայց գնաճի կանխատեսումը ճշգրտվեց ուկրաինական պատերազմի պատճառով:

Յետեւաբար, միջազգային շուկաներում այս երկրներից մատակարարվող մի շարք ապրանքների գները սկսեցին աճել: Յենը 70-75 դոլարից մինչեւ 120 դոլար է բարձրացել նավթի գինը՝ մեկ բարելի դիմաց, ինչը զգալի աճ է եւ ուղղակիորեն կապված է Ուկրաինայում ռազմական գործողությունների հետ: Բնականաբար, այս բոլոր գործոններն ար-

Վրաստանում գնաճի մակարդակի վրա, թեւ գիտենք, որ անցյալ տարի գնաճի մակարդակը երկրում բավական բարձր է եղել: Յետեւաբար, հիմքը բարձր է: Գնաճը միանշանակ կսկսի նվազել արդեն ապրիլին, բայց այն այլեւս մոտ չի լինի այն թիրախին, որը մենք կանխատեսում էինք: Այսինքն՝ 3 տոկոս նշագծին, բայց կարելի է ասել, որ գնաճի մակարդակն իսկապէս կսկսի նվազել ապրիլի ամսին,- ասաց Լաշա Խուցիշվիլին:

Անդրադառնալով պարենային անվտանգության թեմային՝ ֆինանսների նախարարը նշեց, որ այսօր երկրում բավարար բանակային մարտահրավերներ կա եւ պարենային անվտանգությունը վտանգված չէ:

- Միջազգային շուկաներում այլուրի գնի հետ կապված իրավիճակը շատ դիմադի է: Եթե կա անհրաժեշտություն եւ մեծ ռիսկ, որ երկիրը պարենային անվտանգության ամրապնդման համար ավելի շատ ցորենի ներկրման կարիք ունենա, բնականաբար, այս որոշումը կընդունվի: Երկիրն ունի մոտ 1,5 ամսվա ցորենի ռեսուրս,- ասաց Լաշա Խուցիշվիլին:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ տա ց ո լ վ ու մ ե ն